Ինչպես մաքրել հրդեհից առաջացած ծուխը և մոխիրը
Առողջապահական փաստերի թերթիկ
Հունվարի 23, 2025

Շրջակա Միջավայր և Առողջություն

Ծուխը և մուրը կարող են տարածվել և ներթափանցել սենյակներ՝ ազդելով ներկի, գորգերի, պաստառների, վարագույրների, հագուստի և այլ իրերի վրա: Առաջին քայլը, որը պետք է անել հրդեհից հետո մաքրման ժամանակ, հրդեհի վայրը օդափոխելն է և բեկորները հեռացնելը: Որևէ վերահարդարում անելուց առաջ պարտադիր է մանրակրկիտ մաքրել և չեզոքացնել թափոններն ու հոտերը, ինչպես նաև մաքրել դրսի տարածքները, օրինակ՝ խաղահրապարակի սարքավորումները:

Նշում: Եթե երեխաներ ունեք, նրանց թողեք ազգականների կամ ընկերների մոտ, քանի դեռ դուք հրդեհից հետո մաքրություն եք անում: Տեղանքը կարող է անապահով լինել երեխաների համար, և վնասը տեսնելը կարող է վշտացնել նրանց և առաջացնել երկարաժամկետ հետևանքներ՝ ներառյալ մղձավանջներ:

Ինչպես սկսել. ընդհանուր մաքրության մեթոդներ

Հրդեհի տեսակից է կախված մաքրման եղանակը: **Թթվածնի բարձր կուտակումով** հրդեհներին բնորոշ է արագ տարածվելու կարողությունը, ինչի արդյունքում դրանք դառնում են ավելի կործանարար, իսկ դրանք մարելը՝ ավելի դժվար: Սովորաբար **թթվածնի բարձր կուտակումով հրդեհներն** առաջացնում են չոր փոշոտ մուր: Ստորև ներկայացված է մաքրման եղանակը:

Խորհուրդներ և ցուցումներ մաքրման վերաբերյալ

- Մաշկի հետ շփումից խուսափելու համար կրեք լվանալու կենցաղային ձեռնոցներ և նմանատիպ այլ ձեռնոցներ, երկարաթև վերնաշապիկներ ու տաբատներ: Եթե ձեր մաշկի վրա մոխիր է հայտնվում, հնարավորինս շուտ լվացեք այն:
- Կրեք անհատական պաշտպանիչ հանդերձանք, օրինակ՝ փոշուց պաշտպանող դիմակ (ցանկալի է N95 դիմակ), որպեսզի խուսափեք մոխիր և օդային այլ մասնիկներ շնչելուց:
- Օդափոխեք տարածքը (բացեք պատուհանները և այլն)՝ մուրն ու հոտը հեռացնելու համար:
- Հեռացրեք այրված թափոնները՝ հոտերը նվազեցնելու համար:
- Տեղադրեք չորացուցիչներ՝ օդի խոնավությունը (հարաբերական խոնավությունը) կարգավորելու համար, հատկապես այնտեղ, որտեղ կրակը մարելու համար ջուր է օգտագործվել:
- Արագորեն գնահատեք պարունակությունը՝ ըստ արժեքի, որպեսզի որոշեք՝ արդյոք կարիք կա, որ դրանք մաքրվեն, թե հեռացվեն:
- Պատերից, կահույքից և հատակից մուրն ու ծուխը հեռացնելու համար օգտագործեք թույլ օճառ կամ լվացող միջոց կամ յուրաքանչյուր 1 **գալոն** տաք ջրի հետ խառնեք **1 բաժակ** կենցաղային մաքրող կամ սպիտակեցնող քլոր և **4 - 6 ճաշի գդալ** եռանատրիում ֆոսֆատ: Կրեք ռետինե ձեռնոցներ: Անպայման մակերեսները պարզաջրեք մաքուր տաք ջրով և լավ չորացրեք:
- Պատերը լվացեք փոքր հատվածներով՝ մաս-մաս՝ սկսելով հատակից և գնալով վեր, որպեսզի խուսափեք բծերից: Անմիջապես պարզաջրեք մաքուր ջրով:
- Առաստաղը լվացեք վերջում:

- Որպեսզի նվազեցնեք բորբոս ու սնկեր առաջանալու հավանականությունը, սրբեք բոլոր այն մակերեսները, որոնք խոնավ են եղել, 1 բաժակ հեղուկ կենցաղային սպիտակեցնող նյութի և մեկ **գալոն** ջրի լուծույթով: **Նախ փորձարկեք սպիտակեցնող լուծույթը փոքր տարածքի վրա՝ համոզվելու համար, որ գունաթափում չի լինի: Փորձարկելու համար սրբեք լուծույթով և թողեք 24 ժամ չորանա:**
- Մի ներկեք պատերն ու առաստաղները, քանի դեռ երկուսն էլ ամբողջովին չեն չորացել:
- Լվացվող պաստառը կարելի է մաքրել այնպես, ինչպես ներկված պատերը, բայց մի թրջեք մինչև թուղթը: Օգտագործեք վաճառվող սոսինձ՝ պոկված եզրերը կամ հատվածները նորից փակցնելու համար:
- Բոլոր մետաղական ծածկույթները սրբեք կերակրի յուղով՝ ժանգը և բծերի առաջացումը կանխելու համար:
- Որպեսզի չժանգոտվող պողպատի վրայից հեռացնեք ջերմությունից առաջացած գունաթափումը, փափուկ կտորը թաթախեք քացախի մեջ և դրանով շփեք չժանգոտվող պողպատի մակերեսը: Մաքրեք մակերեսը, մինչև այլևս բծերը չերևան:
- Մաքրեք պլաստմասսան և այնպիսի մակերեսները, ինչպիսիք են պոլիվինիլքլորիդի (PVC) պատուհանները և սպիտակ ներկված մակերեսները՝ օգտագործելով թույլ լվացող միջոց, որպեսզի հեռացնեք հնարավոր թթվային մուրը, որը կարող է ակտիվանալ օդի խոնավության դեպքում և առաջացնել մշտական բծեր:
- Կաթսաները, թավաները, հարթ սպասքը և նմանատիպ այլ պարագաները պետք է լվանալ օճառաջրով, ողողել, ապա փայլեցնել:
- Ձևը պահպանելու համար պայուսակները և կոշիկները լցրեք թերթերով: Ճամպրուկները պահեք բացված վիճակում:
- Մաքրելու համար չպետք է օգտագործվեն անուշահոտեր պարունակող նյութեր, քանի որ դրանք քողարկում են հոտերը:
- Եթե մակերեսների բծերը հնարավոր չէ հեռացնել, օգտագործեք հատուկ ներկեր (բծերի տարածումը կանխող հատկությամբ): Որպես կանոն՝ այս ներկերը **լաքեր են** կամ ունեն **յուղային հիմք**:

Մաքրելու մեթոդներ հատուկ տեսակի վնասների դեպքում

Թթվածնի բարձր կուտակումով հրդեհների հետևանքով առաջացած վնասների դեպքում: Օգտագործեք չոր քիմիական սպունգներ, որոնք նախատեսված են սկզբնական նստվածքները հեռացնելու համար, և այնուհետև օգտագործեք թույլ լվացող միջոց:

Խոհանոցի հրդեհների հետևանքով առաջացած վնասների դեպքում: Պահանջվում է մանրակրկիտ մաքրում, քանի որ մնացորդները կարող են հեշտությամբ տեսանելի չլինել: Հիշեք, որ սովորաբար խոհանոցի պահարանների և դարակների պարունակությունը պետք է հեռացնել՝ թաքնված տարածքները մաքրելու համար:

Պինդ մնացորդների մաքրում: Սա կարող է պահանջել մասնագետների օգնություն և ֆիզիկական ուժի գործադրմամբ մաքրում: Մաքրման մեթոդները ներառում են հետևյալը.

- Ցածր ճնշմամբ ավազամաքրում
- Նատրիումի բիկարբոնատով քայքայում
- Չոր սառույցի միջոցով քայքայում
- Ուժեղ գոլորշու միջոցով լվացում
- Քիմիական նյութերի կիրառում և խառնում
- Չվնասող ռետինով քայքայում

Մաքրման մեթոդներ հատուկ իրերի համար

Վարագույրներ և պաստառներ: Մուրը յուղ է, և պետք է որքան հնարավոր է հեռացվի հզոր փոշեկուլի միջոցով: Մրոտված գործվածքների վրա մի օգտագործեք ուղղահայաց փոշեկուլ կամ որևէ սարք կամ կցորդ, որն ունի վրձիններ կամ հարիչ ձողեր, քանի որ դրանք մուրը կտարածեն ձեր մյուս իրերի վրա և շատ ավելի դժվար կդարձնեն դրանք մաքրելը: Փոշեկուլի բերանը մակերեսից մի փոքր բարձր պահեք և թողեք, որ փոշեկուլը կատարի մուրը մակերեսից հեռացնելու աշխատանքը: Մաքրված իրերը մաքրելուց **անմիջապես** հետո ծածկեք մաքուր սավանով, որպեսզի ձեր մաքրությունը շարունակելիս դրանք նորից չաղտոտվեն: Լվացքի մեքենայով մի լվացեք վարագույրները կամ այլ իրեր, որոնք պահանջում են չոր (քիմիական) մաքրում:

Գորգ: Օգտագործեք վարձակալության կետից կամ սուպերմարկետից վերցված պտտվող մաքրիչ կամ պոկող մեքենա կամ վարձեք գորգ մաքրող մասնագետ:

Հագուստ և անկողին: Ծխի հոտերը կարող են մնալ գործվածքների մեջ շատ երկար ժամանակ, մինչև չայրված բոլոր քիմիական նյութերը հեռացվեն: Դրանցից շատերը աչքի համար անտեսանելի են: Գիշերը թրջեք լվացող միջոցով և լվացեք սովորականի պես: Այն իրերի դեպքում, որոնք կարելի է սպիտակեցնել, լվացքի ընթացքում ավելացրեք սովորական լվացքի սպիտակեցնող նյութ:

Կոշտ նյութեր՝ ծակոտկեն (ներկված մակերեսներ, պատի տախտակ, գիպս, պատի պաստառ, չերեսպատված փայտ): Եթե ծակոտկեն մակերեսների վրա մուր կա, խորհուրդ ենք տալիս օգտագործել չոր քիմիական սպունգ՝ հնարավորինս շատ մուր հեռացնելու համար: Այս քայլը կարող է կանխել մրի թափանցումը մակերեսի խորքը, որտեղ այն կարող է դառնալ մշտական բիծ:

Կոշտ նյութեր՝ քիչ ծակոտկեն (սալիկներ, երեսպատված փայտ, ապակի, մետաղ, սարքավորումներ և պատի վինիլային պաստառ): Օգտագործեք սպունգ, սրբիչ կամ սրբեք կենցաղային մաքրող նյութով:

Խորհուրդներ խաղահրապարակի սարքավորումները մաքրելու վերաբերյալ

Խաղահրապարակի սարքավորումները կարելի է մաքրել՝ հետևելով վերը նշված մաքրման մեթոդներին: Սակայն ավազապատ տարածքից մոխիրն ու մուրը հեռացնելու համար մանրակրկիտ մաքրումը արդյունավետ **չէ**: Անվտանգություն և մաքրություն ապահովելու համար ավազը փոխարինեք նորով:

Խորհուրդներ վերանորոգման ժամանակ անվտանգության վերաբերյալ

- Մի օգտագործեք էլեկտրական սարքեր, որոնք մոտ են եղել կրակին:
- Մի օգտագործեք առաստաղին ամրացված որևէ սարք, եթե առաստաղը թաց է:
- Առաջին ստուգման ժամանակ որևէ բանի մի դիպչեք, որպեսզի մուրը չանցնի մի առարկայից մյուսին:
- Եթե կարիք կա, վերականգման աշխատանքների համար դիմեք մասնագետների օգնությանը:

Հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք **Շրջակա Միջավայրի և Առողջության բաժնի** հետ **(888) 700-9995** հեռախոսահամարով կամ էլ. նամակ ուղարկեք ehmail@ph.lacounty.gov հասցեին: